

«ԱԶՐԱՅԻԼ»։ Ս.-Պետերբուրգ. տպ. Ակորոխորովի 1890 թ. 8-աճալ.
57 երես. տառ № 12, գինն է 5 կոպեկ։

Ոգևորիչ Ազրաիլը լալտնի Մխիթար աւագակապետն է, որ լետուդարձաւ Դաւիթ բէկի համհարզներից ամենանշանաւորը, հալոց զօրքերի սպարապետը։ Դարաբաղում անցեալ դարում հալոց թուրքերի հետ արինահեղ կռիւները ծնեցրին մի շարք ուժեղ, հօր անձնաւորութիւններ, որոնց հետ աւելի լաւ ծանօթացնում է Բաֆֆի «Դաւիթ—բէգը»։ Նայն անձնաւորութիւնները միայն անհամեմատ թուլ կերպով

դուրս են բերած և ալս գրքովկում, որի մէջ բնութեան երկայն նկարագրութիւնները և հերոսների տեղ տեղ միամիտ խօսակցութիւնները թուլացնում են պատմածի հետաքրքրութիւնը։ Սթէ ժողովրդական ընթերցանութեան համար մի շատ էժանագին հրատարակութիւն չիւնէր Բաֆֆի «Դաւիթ—բէգից»՝ աւելի նպատակաւարմար կը լինէր։

Լ. Ս.

«ՇԱՄԻԼԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԸ», Ս.-Պետերբուրգ տպ. Ակորոխորովի 1880 թ. 8-ճալ, 18 երես, տառ № 12. գինը 2 կոպեկ։

Դրքովկիս բովանդակութիւնը ալս է։ Ռուսները շրջապատել են լեւնական չեչեններին ամեն կողմից, Գոռոզ Շամիլը հեռու է նոցանից և Չեչնան կամ պէտք է հնազանդւի ուսներին կամ զրկւի իւր որդկերանցից կատաղի կռւում։ Չեչնալի գլխաւորները մտածում են պատգամաւորներ ուղարկել Դարչօ առւելը, իմամ Շամիլի մօտ, որ նա կամ օգնէ զօրքով կամ թուլ տալ հնազանդւելու գեաուր-ուսներին։ Թաց ու կը խիզախի հնազանդութեան մասին իմամի մօտ խօսել։ Շամիլը միայն լսում է իւր ջերմ սիրած մօր խորհուրդները. ալս իմանում են պատգամաւորները և միջնորդ

գցում նորան։ Շամիլի մալըը լալտնում է իւր որդուն չեչենների միտքը հնազանդւելու ուսներին։ Տխրում է անվեհեր իմամը և երեք օր փակւում մզկիթում աղօթելու Ալլահին և Մարգարէից խորհուրդ հարցնելու, իսկ ժողովուրդը լաց և վաւոցով մոմ ու աղօթքով սպասում է իմամի երևալուն։ Ահա և նա սփրթնած, աչքերն արնկալած բարձրացաւ մզկիթի կտուրը, կանչեց մօրը և դիմեց ժողովրդին, զալացած լալտնելով որ չեչենները մօռացել են իրանց Ալլահին և Մուհամէդին տւած խօստումը, որովհետեւ իրանց լանցաւոր սրտերում լղացել են մի լանդուգն միտք՝ հնազանդւել գեաւորներին։